«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝** Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը

**Դաստիարակ՝** Լարիսա Աթաբեկյան

**Մանկապարտեզ՝** Սևքարի մանկապարտեզ

**2023թ.**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ ..... 5
ԳԼՈՒԽ 1. Մանկավարժությունը որպես գիտություն ..... 5
1.1Մանկավարժական հասկացություններ, երեխայի զարգացում: ..... 5
1.2 Ավագ նախադպրոցականի տարիքային առանձնահատկությունները: ..... 7
1.3 Գեղագիտական դաստիարակության դերը երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացման գործում: ..... 8
1.4 Խաղի դերը երեխայի ինքնուրույնության, նախաձեռնողականության զարգացման գործում: ..... 10
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ ..... 13
ԳԼՈՒԽ 2. Աշխատանքի ընթացքը ..... 13
2.1 Պարապմունքի պլանավորում ..... 13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 17

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթությունը երեխայի զարգացման կարևորագույն նախապայմաններից է: Նրա կյանքի առաջին տարիներն էական նշանակություն ունեն ո՛չ միայն առողջության և ֆիզիկական զարգացման, այլև սովորելու ունակության, հուզական աշխարհի և սոցիալական հմտությունների ձևավորման համար: Մարդու կյանքում զարգացման բոլոր փուլերը փոխպայմանավորված են, և ամեն բան սկսվում է մանկությունից: Այն ինչ երեխան ձեռք է բերում մանկության շրջանում, ուղեկցում է նրան ողջ կյանքում: Երեխային խնամող մեծահասակները նպաստում են աշխարհաճանաչմանը և սոցիալական փորձի յուրացմանը, կյանքի հմտությունների ձևավորմանը: Մեծահասակը հասկանալով, որ յուրաքանչյուր երեխա ինքնատիպ է ու անկրկնելի իր տեսակի մեջ, ուղղորդելով նրան, նպաստում է երեք կարևորագույն հատկությունների ձևավորմանը՝ մտածելու, հաղորդակցվելու և ինքնուրույն կողմնորոշվելու: Դաստիարակությունը չափազանց պատասխանատու գործընթաց է: Երեխային ճիշտ ուղղորդելու համար անհրաժեշտ է նաև հասկանալ նրան, գիտակցելով, որ ձևավորվող մարդուկն ունի ցանկություններ, նախասիրություններ և հետաքրքրություններ, ընդունակ է վստահելու կամ հակառակը. կասկածելու և վիրավորվելու, կարող է կարծիք հայտնել, պաշտպանել սեփական իրավունքները և որոշումներ կայացնել[1]:

Նախադպրոցական կրթության գլխավոր նպատակներից մեկն էլ սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումն է:

**Թեմայի արդիականություն**: Նոր մշակված բազմաթիվ մեթոդները, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն են տալիս դաստիարակին պարապմունքներն ավելի արդյունավետ կազմակերպելու, դրանց ընթացքը երեխաների համար ավելի մատչելի և հետաքրքիր դարձնելու, որն էլ նպաստում է սաների մոտ զարգացնել ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործական ունակությունները: Սա էլ խոսում է թեմայի արդիականացման մասին, այսինքն՝ տարբեր կատարելագործումների միջոցով, ներկա ժամանակի պահանջներին համապատասխան փոփոխությունների շնորհիվ նշված թեման դարձնում է ավելի ընկալելի երեխայի համար:

**Աշխատանքի նպատակը**: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների առանձնահատկությունները և զարգացնել

[1] Ա.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» էջ 3:

ինքնուրույն գործելու, նախաձեռնող լինելու և ստեղծագործական ունակություններ դրսևորելու կարողություններն ու հմտությունները: Այդ կարողությունների ու հմտությունների ձևավորումն ու զարգացումը կօգնի երեխաներին արդի աշխարհում ունենալ հաջողություններ, լուծել սեփական խնդիրները, իրականացնել նոր գաղափարներ:

**Աշխատանքի խնդիրները:**

- Ուսումնասիրել և բացահայտել նախադպրոցական տարիքի երեխաների անհատական առանձնահատկությունները:
- Գեղագիտական դաստիարակության և խաղային տեխնոլոգիաների օգնությամբ բացահայտել սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների խթանման ուղիները:

**Վարկած:** Դաստիարակը պետք է օժտված լինի մանկավարժական ընդունակություններով, ճիշտ մոտեցում ցուցաբերի յուրաքանչյուր երեխային, յուրաքանչյուրի հետ աշխատելիս հաշվի առնի երեխայի առանձնահատկությունները, բոլոր աշխատանքներն իրականացնի ըստ համապատասխան կանոնների:

# ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

## ԳԼՈՒԽ 1. Մանկավարժությունը որպես գիտություն

### 1.1Մանկավարժական հասկացություններ, երեխայի զարգացում:

Մանկավարժությունը որպես գիտություն, գիտական աշխարհընկալման ոլորտ, մարդկային էության կատարելագործմանը նպաստող պայմանների ուսումնական բնագավառ, ձևավորվել է 17- րդ դարում՝ չեխ հանրահայտ մանկավարժ Յան Ամոս Կոմենսկու մանկավարժական գաղափարների և աշխատությունների շնորհիվ[2]: Մանկավարժությունը գիտություն է դաստիարակության մասին: Ինչպես և ցանկացած այլ գիտություն, մանկավարժությունն օգտագործում է հասկացություններ, որոնք բնորոշում և հիմնավորում են գիտության նշված բնագավառը: Առանձնացվում է մանկավարժության հիմնական երեք հասկացություն՝

Դաստիարակություն

Ուսուցում

Կրթություն

Բայց քանի որ նշված երեք հասկացություններն էլ ուղղված են երեխայի զարգացմանը, ապա մանկավարժության հիմնական հասկացությունների շարքին կարելի է դասել նաև զարգացումը:

Դաստիարակությունն իրենից ներկայացնում է կառավարելի մանկավարժական գործընթաց՝ ուղղված երեխայի անձնավորության ձևավորմանը: Դաստիարակության արդյունքում երեխան սովորում է ինքնուրույն ճանաչել աշխարհը, ձեռք է բերում որոշակի դիրքորոշում իր և շրջապատող մարդկանց հանդեպ:

Ուսուցումը մանկավարժի և երեխաների ակտիվ փոխներգործության յուրահատուկ ձև է, որի արդյունքում յուրացվում են գիտելիքներ, ձևավորվում կարողություններ և հմտություններ, զարգանում են երեխայի ընդունակությունները: Այն երկկողմանի մանկավարժական գործընթաց է, որը կազմակերպվում և ղեկավարվում է մանկավարժի կողմից: Մանկավարժը ստեղծում և ապահովում է ուսուցման համար անհրաժեշտ պայմաններ և նպաստում երեխաների զարգացմանը: Իսկ ուսուցման տեսության կարևորագույն հասկացություններն են՝ գիտելիքը, կարողությունն ու հմտությունը:

[2] Ա.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» էջ 10:

Գիտելիքը օբյեկտիվ իրականության արտացոլման միջոց է փաստերի, հասկացությունների, գիտական ամփոփումների (օրինաչափությունների, կանոնների, օրենքների, սահմանումների և այլ) ձևով:

Կարողությունը յուրացված գիտելիքների և սեփական փորձի հիման վրա ինքնուրույն տեսական և պրակտիկ գործողություններ կատարելու ունակություն է, պատրաստակամություն:

Հմտությունը պրակտիկ գործունեության կարողություն է, որը դրսևորվում է անհրաժեշտ գործողությունների հմուտ, վարժ կատարմամբ:

Կրթությունը բազմաբովանդակ մանկավարժական հասկացություն է, որն իր մեջ պարունակում է միաժամանակ երեք բնորոշում: Այն և՛ անընդհատ գործընթաց է, և՛ արդյունք, և՛ համակարգ: Կրթությունը գիտելիքների, կարողությունների և հմտությունների, դատողությունների և մտածելակերպի, բարոյական սկզբունքների և արժեքների համակարգ է, որով մարդն առաջնորդվում է իր ողջ կյանքում: Ինչպես արդեն նշել ենք, զարգացումը նույնպես կարելի է դասել մանկավարժության հիմնական հասկացությունների շարքին: Այն մարդու մեջ հաջորդաբար և բնականոն ճանապարհով տեղի ունեցող կենսաբանական և հոգեկան փոփոխությունների օրինաչափ գործընթաց է, քանակական և որակական փոփոխություններով պայմանավորված շարժում:

**Զարգացման և անձի ձևավորման գործոններ:** Երեխայի զարգացման և նրա անձնավորության ձևավորման գործընթացները փոխկապված են: Երեխայի զարգացման ընթացքն ուղղված է նրա կայացմանն իբրև կենսաբանական տեսակի և հասարակության անցումի: Մարդը ծնվում է որպես բանական մարդ ցեղի ներկայացուցիչ և ապրելով հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվում է իբրև անձնավորություն:

Երեխայի զարգացմանը, ինչպես նաև նրա անձնավորության ձևավորմանը նպաստող խթանները պայմանականորեն միավորում են երեք խմբի՝ կենսաբանական, սոցիալական և մանկավարժական:

Կենսաբանական գործոնների խմբին են դասվում ժառանգականությունը և բնական միջավայրը: Երեխայի զարգացման հիմքում ընկած են ժառանգաբար փոխանցվող նախադրյալները: Իսկ գիտնականների հատուկ հետազոտությունները, ապացուցում են, որ անձնավորության կայացման գործընթացում բավական մեծ է բնական միջավայրի դերը:

Մարդը դառնում է անձնավորություն սոցիալականացման արդյունքում: Հասարակությունից դուրս անհնար է մարդու հոգեկան, սոցիալական և հոգևոր

զարգացումը: Երեխային շրջապատող իրողությունը կոչվում է միջավայր: Նա մեծանում և զարգանում է կոնկրետ սոցիալ- մշակութային միջավայրում, յուրացնում է տվյալ հասարակության կողմից փոխանցվող այն փորձը, որի կրողներն են այդ հասարակության հասուն ներկայացուցիչները՝ մեծահասակները:

Կենսաբանական և սոցիալական գործոնների ներազդեցությունը կարգավորվում է մանկավարժական գործոններով: Մանկավարժական գործոններից առավելապես կարևորվում է դաստիարակության գործընթացը: Դաստիարակությունն իրենից ներկայացնում է փոխըմբռնման, վստահելի հարաբերությունների հիման վրա կառուցվող, նպատակային համատեղ գործունեություն՝ ուղղված երեխայի զարգացմանն ու կրթությանը:

### 1.2 Ավագ նախադպրոցականի տարիքային առանձնահատկությունները:

Նախադպրոցական տարիքն ընդգրկում է 3 – 7 տարեկան հասակը: Այն բաժանվում է երեք փուլի՝ վաղ, միջին, ավագ: Ավագ նախադպրոցական տարիքում, երբ բարդանում է շփումը մեծահասակների հետ, երեխան ինքն է հաճախ որոշում իր հարաբերությունները ինչ – որ բանի նկատմամբ, գնահատում է իր արարքները և դժվարությամբ է ընտրություն կատարում դրդապատճառի միջև: Ավագ նախադպրոցականները չեն սիրում միայնակ խաղալ՝ ձգտում են ինչ – որ բան պատմել ընկերոջը, նրա հետ միասին կատարել աշխատանքային հանձնարարությունը, նրանք անհանգստանում են մեկը մյուսի համար, առանց ընկերների ձանձրանում են: Վաղ նախադպրոցական տարիքից մինչև ավագ նախադպրոցական տարիք էական զարգացում է ապրում մտածողությունը, խոսքի զարգացումը: 5 – 6 տարեկանում շատանում են հարցերը երեխաների մոտ, որը մեծահասակների հետ շփման ձև է: Եթե դաստիարակը աջակցում է երեխայի հարցերին, ապա ձևավորվում է անձի արժեքավոր գծերը՝ հետաքրքրասիրություն, հարցասիրություն, դիտողականություն[3]: Այս արժեքավոր գծերն էլ նպաստում են սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Ավագ նախադպրոցական տարիքում երեխայի զարգացումը, նրա հիմնական ձեռքբերումները պայմանավորված են կամածին բնույթի հոգեկան գործընթացներով: Բուռն զարգացող կամածին հոգեկան գործընթացները նպաստում են երեխայի գործունեությանը և վարքագծի կարգավորմանը, դրդապատճառային ոլորտի

[3] https://www.poqrikishkhan.am Նախադպրոցական տարիք:

վերակառուցմանը: Ավագ նախադպրոցականը փորձում է ծրագրել սեփական գործողությունները, նախապես վերլուծելով ու համապատասխանեցնելով դրանք ներքին ցանկություններին և պահանջմունքներին: Այս տարիքում ընդլայնվում են երեխայի իմացական հետաքրքրությունները, զարգանում են ինտելեկտուալ կարողություններն ու ստեղծագործական ընդունակությունները, աստիճանաբար ձևավորվում են տրամաբանական աշխարհաճանաչման մեխանիզմները, որոնք նպաստում են ուսումնական տարիների դրսևորմանը: 6 – 7 տարեկանում լիարժեք զարգացած երեխան պատրաստ է կազմակերպված սիստեմատիկ ուսուցմանը դպրոցում[4]: Հետաքրքրասիրությունը իմացական ակտիվության յուրահատուկ ձև է, որն արտահայտվում է ամեն բան իմանալու, որևէ գործունեության մեջ ներգրավվելու, առանց տարբերակման ճանաչելու ցանկությամբ: Իմացական հետաքրքրությունների առկայությունը նպաստում է գործունեության ընթացքում երեխաների ինքնուրույնության, կամային որակների, դրական հուզականության դրսևորմանը, մտավոր և պրակտիկ գործունեության կայացմանը: Իմացական հետաքրքրությունը դրսևորվում է ոչ միայն իմացության գործընթացում, այլև երեխայի ստեղծագործական գործունեության ձևերում՝ նկարներում, հորինված պատմություններում, խաղերում:

### 1.3 Գեղագիտական դաստիարակության դերը երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացման գործում:

«Աշխարհը կարելի է ճանաչել երկու ճանապարհով՝ գիտության և արվեստի»: Վ. Գ. Բելինսկի

Անփոխարինելի է արվեստի դերը երեխայի ներդաշանակ զարգացման գործում: Ժամանակակից մանկավարժությունն իր անհատակողմնորոշիչ դիրքորոշումներում ուղղված է յուրաքանչյուր երեխայի ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը: Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության համակարգում բացառիկ կարևորություն ունի գեղագիտական դաստիարակությունը: Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում է նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության, բացահայտում է երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ: Ի. Յ. Լերները ուսումնասիրելով նախադպրոցականի ստեղծագործական ընդունակությունների

[4] Ա.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» էջ 37:

դրսևորման եղանակները, առանձնացնում է ստեղծագործական գործունեության զարգացման երեք փուլ, որոնք բնութագրում են միաժամանակ նախադպրոցահասակ երեխայի ստեղծագործելու և՛ ընթացքը, և՛ մեխանիզմները:

Առաջին փուլը մտահղացման ձևակերպման փուլն է: Ստեղծագործելու մտահղացումն առաջանում է աստիճանաբար կուտակվող և հարստացող հուզազգացմունքային ոլորտի և ձևավորվող հուզական տպավորությունների հիման վրա, որոնք երեխայի մեջ ձևավորում են որոշակի կերպարային պատկերացումներ, դրանք ամրապնդվում են գեղագիտական փորձով, և երեխան փորձում է այդ ամենը անհապաղ որևէ կերպ վերարտադրել: Ավագ նախադպրոցական տարիքում մտահղացումը կայուն բնույթի է: Երեխան ընդունակ է ստեղծագործելու կերպարվեստի միջոցով, գեղագիտական խոսքի, երգարվեստի և պարարվեստի օգնությամբ, իսկ հաճախ՝ մի քանի ձևերում միաժամանակ:

Երկրորդ փուլն ըստ Ի. Յ. Լերների, կերպարի ստեղծման փուլն է, որի ընթացքում երեխան «կառուցում է» իր մտահղացումը: Սովորաբար, երեխան իր ստեղծագործական մտահղացումը արտահայտում է գունային երանգավորմամբ, հորինած կերպարներով, հեքիաթային հերոսների յուրովի պատկերմամբ և բոլորովին անհավանական անսովոր կերպարներով՝ հասկանալի միայն երեխայի կողմից:

Երրորդ փուլը՝ ստեղծագործության վերլուծության փուլն է, որի ընթացքում երեխան պատրաստակամ և ամենայն պատասխանատվությամբ նկարագրում է սեփական ստեղծագործությունը, բացահայտում մտահղացման իրականացման եղանակները, արտահայտիչ միջոցների ընտրությունը: Գեղագիտական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում պետք է ուղղված լինի երեխայի ստեղծագործելու ցանկության խթանմանը և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը[5]:

Գեղագիտական գրականության դերն ու նշանակությունը ևս անփոխարինելի է նախադպրոցականի գեղագիտական գիտակցության զարգացման գործում: Հատկապես հզոր է ժողովրդական բանահյուսությունը՝ հեքիաթների, շուտասելուկների, սուտասելուկների, հանելուկների, խաղիկների և ծեսերի ներգործությունը: Հեքիաթն ուղեկցում է երեխային նախադպրոցական մանկության շրջանում: Հեքիաթների լեզուն բացարձակ հասկանալի է երեխաների կողմից, որովհետև այն պատկերով է և խոսում է նրանց հետ հերոսական կերպարներով, առասպելական, երևակայական նմուշներով,

[5] Ա.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» էջ 90 – 91:

բազմաբովանդակ և հյութեղ գույներով և երանգներով: Հեքիաթի երևակայական կերպարները ներառում են բարու և չարի հավաքական նմուշներ, բարոյականության և գեղեցկության տարրեր, որոնք ընդհանրացված ձևով նպաստում են երեխայի կողմից երկրային կյանքի իմաստավորմանը, իրական կյանքում բարու և չարի տարանջատմանը: Հեքիաթային կերպարները երեխաների կողմից ընկալվում են ամենայն լրջությամբ նույնիսկ այն դեպքում, երբ երեխան գիտակցում է, որ դրանք իրական չեն, գոյություն չունեն կյանքում: Նախադպրոցական գեղագիտական զարգացմանը նպաստում է ինքնուրույն գեղարվեստական գործունեությունը, որը ձևավորվում է մանկավարժական աշխատանքի կազմակերպման պայմաններում[6]:

**1.4 Խաղի դերը երեխայի ինքնուրույնության, նախաձեռնողականության զարգացման գործում:**

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում: Խաղային գործունեության բացառիկ մանկավարժական նշանակությունը նախադպրոցական երեխաների կյանքում կարևորել են անցյալի ականավոր մանկավարժներ՝ Յ. Ա. Կոմենսկին, Ժ. Ժ. Ռուսոն, Ֆ. Ֆրյոբելը, Կ. Դ. Ուշինսկին, ինչպես նաև խոշորագույն հայ մանկավարժներ և գրողներ՝ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Առ. Բահաթրյանը, Ա. Արղությանը, Ս. Բաբայանը և այլոք[7]: Խաղը ստեղծագործական գործունեություն է, այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը: Ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունն ընդունելի է համարում Ս. Ա. Կոզլովայի և Տ. Ա. Կուլիկովայի կողմից առաջարկված խաղերի դասակարգման եղանակը: Առաջին խմբին դասվում են.

- սյուժետա - դերային խաղերը
- խաղ - թատերացումները
- կառուցողական խաղերը
- ռեժիսորական խաղերը և խաղ-երևակայությունները

Նախադպրոցականի խաղային գործունեությունը զարգանում է հետևյալ առանձնահատկություններով.

[6] Ա.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» էջ 92 – 93:
[7] Ա.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» էջ 95:

● Խաղային գործունեության ընթացքին բնորոշ սյուժե

● Սոցիալական դերերի յուրացումը որպես խաղային գործունեության նպատակ

● Ստեղծագործական բնույթի խաղային գործունեությանը նախադպրոցահասակ երեխայի համակողմանի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց:

Ստեղծագործական խաղերի բովանդակությունը կառուցվում է խաղացող երեխաների կողմից, այն ստեղծագործական բնույթի է: Ստեղծագործական խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումներն արտաքին աշխարհի հանդեպ, ինքնուրույնության և ակտիվության մղումները, դրսևորվում են «ազատության աստիճանները», ցանկությունները, նախասիրություններն ու հետաքրքրությունները: Խաղի սյուժեն ընտրվում է խաղացող երեխաների կողմից և դրա հիման վրա կառուցվում է խաղի բովանդակությունը[8]:

Կանոնով խաղերը հատուկ կազմակերպվում են մեծահասակների կողմից երեխաներին ուսուցանելու, դաստիարակելու և զարգացնելու նպատակով: Այս խմբին են պատկանում դիդակտիկ խաղերը, շարժողական խաղերը և տարբեր բնույթի զարգացնող խաղեր:

Խաղերի տեսակներից ռեժիսորական խաղը ստեղծագործական բնույթի ինքնուրույն խաղ է: Այն միանձնյա խաղ է, քանի որ մյուս «մասնակիցները» անշունչ առարկաներ են՝ խաղալիքներ, տարբեր իրեր, փոխարինող առարկաներ[9]:

Սյուժետադերային խաղերը ևս բնույթով ստեղծագործական են: Այսպիսի խաղերում երեխան արտացոլում է ոչ միայն առանձին տպավորություններ կամ պատկերացումներ, այլև տարբեր իրադրություններ, անձնական փորձից տարբեր դրվագներ կամ հասարակական երևույթներ:

Խաղ - թատերացումները երեխաների կողմից նախաձեռնված բեմականացումներ են, խաղ - ներկայացումներ, որոնց միջոցով երեխան փորձում է վերարտադրել իր երազած աշխարհը, աշխարհի այն կատարյալ պատկերը, որին նա ներքուստ ձգտում է, նմանվելով հեքիաթային հերոսներին և առասպելական կերպարներին: Ա. Ն. Լեոնտևը խաղ - թատերացումը համարում է ոչ միայն խաղային, այլև գեղարվեստական գործունեության յուրահատուկ ձև, քանի որ այն նպաստում է մանկան ստեղծագործության գրեթե բոլոր ձևերի՝ գեղարվեստա - խոսքային, երաժշտական, պարային, բեմական, կերպարվեստային զարգացմանը:

---

[8] Ա.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» էջ 101:

[9] Ա.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» էջ 102:

Շինանյութով խաղերը կառուցողական խաղեր են, որոնց մակավարժական նշանակությունը բազմիցս հիշատակվել է ականավոր մանկավարժներ՝ Ֆ. Ֆրյոբելի, Ղ. Աղայանի, Ս. Արղությանի, Գ. Հովհաննիսյանի, Ռ. Շտայների, Լ. Շլեգերի աշխատություններում: Կառուցողական խաղն իրենից ներկայացնում է բնույթով ստեղծագործական, արդյունավետ գործունեություն, որի օգնությամբ երեխան ձեռք է բերում մարդկային պրակտիկ գործունեության կարողություններ և հմտություններ: Շինանյութով խաղերի ընթացքում երեխան, հանդես գալով շինարարի դերում, իսկապես զբաղված է ստեղծարար գործունեությամբ, որի արդյունքը ակնհայտ է, տեսանելի և՛ երեխայի, և՛ մեծահասակների համար:

## Աշխատանքի արդյունքը

Հետազոտելով շատ կարևոր և հետաքրքիր նյութեր, հասկացա, որ յուրաքանչյուր երեխա ինքնատիպ է ու յուրօրինակ: Ինչպես իրենք են տարբեր, տարբեր են նաև նրանց ընկալումները, ցանկությունները, ուստի յուրաքանչյուրի հետ անհրաժեշտ է տանել անհատական աշխատանք, որպեսզի երեխան ունենա բնականոն զարգացում: Հասկացա, որ գեղագիտական դաստիարակությունն ու խաղային տեխնոլոգիաները արդյունավետ, խթանիչ ներգործություն ունեն երեխայի մեջ ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և ստեղծագործական ունակություններ զարգացնելու համար: Իսկ ժամանակակից տեխնոլոգիաները, նոր սարքավորումները հնարավորություն են տալիս պարապմունքի թեմաներին համապատասխան դիդուկտիկ նյութեր պատրաստել և պարապմունքը դաձնել երեխաների համար ավելի պարզ, գեղեցիկ ու ընկալելի: Այս նոր կատարելագործումները գալիս են օգնելու դաստիարակի նպատակաուղղված աշխատանքին և դարձնում են այն պարզ, հասկանալի և ընկալելի տարբեր առանձնահատկություններով օժտված երեխաների համար:

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

## ԳԼՈՒԽ 2. Աշխատանքի ընթացքը

Նախադպրոցական կրթության համալիր ծրագրում տեղ գտած ծրագրային բաղադրիչների զատումը պայմանական է: Բոլոր ծրագրային բաղադրիչները սերտորեն փոխկապակցված են և լրացնում են մեկը մյուսին: Սանի զարգացումը համակողմանի և լիարժեք է ընթանում, եթե բոլոր բաղադրիչների ուղղությամբ միաժամանակ և շարունակական աշխատանք է տարվում[10]:

Նոր մեթոդների կիրառումը նույնպես նպաստում է երեխաների մեջ ստեղծագործական մտքի, նախաձեռնողականությամբ հանդես գալու, ինքնուրույնություն դրսևորելու լիարժեք զարգացմանը:

Շատ հետաքրքիր մեթոդ է հանելուկի հորինումը, որը զարգացնում է երեխայի ստեղծագործական միտքը, ունակությունը: Հետաքրքիր մեթոդ է քննադատական մտածողությունը, երբ երեխային տալիս ես «ի՞նչ կլինի, եթե …» հարցը ու նա ներկայացնում է իր տեսակետը, կարծիքը, իր ձևով է վերլուծում հեքիաթի, պատմվածքի ավարտը: Այս մեթոդը զարգացնում է սանի ինքնուրույն մտածելակերպը, երեխան ինքն է որոշում, թի ինչպիսի շարունակություն ունենա հեքիաթը կամ պատմվածքը:

Հետաքրքիր մեթոդ է ոտանավորի ուսուցումը պատկերային թելադրության միջոցով: Կարելի է երեխայի նախաձեռնությամբ ընտրել որևէ հեքիաթ և այդ հեքիաթի հերոսների պատկերներից պատրաստել գլուխկոտրուկներ և օգտագործել այն տվյալ հեքիաթի շուրջ ուսուցման աշխատանքի ժամանակ: Մեթոդները բազմաթիվ են, դրանց կիրառման արդյունքում կնպաստենք սանի մեջ ինքնուրույն գործելու, ինքնուրույն որոշում կայացնելու, այս կամ այն հարցում նախաձեռնողականությամբ հանդես գալու և ստեղծագործական ունակություններ դրսևորելու զարգացման գործում:

### 2.1 Պարապմունքի պլանավորում

Թեմա՝ «Լեզուն կտրած ծիտիկը» հեքիաթի ընթերցում ընդհատումներով

Տարիքային խումբ՝ 5 - 6 տ. (ավագ խումբ)

Ծրագրային բաղադրիչ՝ ԽՁ, կապը՝ ԿԿԱ

Կարողունակություն՝ Լեզվական և հաղորդակցման կարողունակություն

Վերջնարդյունք՝ Պատմի նկարի բովանդակությունը[11]

---

[10] Նախադպրոցական կրթության համալիր ծրագիր (ավագ խումբ):

[11] Նախադպրոցական կրթության համալիր ծրագիր (ավագ խումբ):

Նպատակներ՝

1. Տալ գաղափար չարի և բարու մասին, որ բարի գործը բարիք է բերում

2. Խթանել երևակայությունը, ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը

3. Նպաստել երեխաների ստեղծագործական մտածողության զարգացմանը

Անհրաժեշտ նյութեր՝ սպիտակ թղթեր, գունավոր մատիտներ, ռետին, նկարներ ծիտիկի, բարի և չար պառավների պատկերներով, պլաստիլին և այլ դիդակտիկ նյութեր:

**Խթանման փուլ**: Ընթերցել հեքիաթից մի հատվածը: Հարց ու պատասխանի միջոցով գաղափար կազմել լավ ու վատ արարքի մասին, տարբերակել բարությունն ու չարությունը: Կիրառել նախադպրոցականի ստեղծագործական միտքը, ունակությունները և երևակայությունը զարգացնող մի մեթոդ: Ընթերցել ընդհատումով և երեխաներին հարցնել՝ իսկ ի՞նչ կլինի հետո: Տալ նրանց մի քիչ ժամանակ մտածելու համար: Երեխաները կսկսեն ստեղծագործել և հորինել հեքիաթի շարունակությունը իրենց երևակայության սահմաններում: Իրենց տարբերակները բարձրաձայնելուց առաջ կազմակերպել խմբային քննարկում ուղղորդող հարցերով.

● Ո՞րն է բարի արարքը:

● Ո՞րն է չար արարքը:

● Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ հեռացավ ծիտիկը:

● Ի՞նչ կկատարվի բարի պառավի հետ:

● Ի՞նչ կկատարվի չար պառավի հետ:

Հետո երեխաները կներկայացնեն հեքիաթի շարունակության իրենց տարբերակը: Վերջում ընթերցել հեքիաթն ամբողջությամբ:

**Իմաստի ընկալման փուլ**: Փակցնել գրատախտակին հեքիաթի հերոսների պատկերները, նկարագրել ծիտիկին, բարի ու չար պառավներին: Երեխաներին բաժանել 3 խմբի և տրամադրել նրանց թղթեր, գունավոր մատիտներ: Խմբերից 1-ինը կնկարի ծիտիկին, մյուսները՝ բարի և չար պառավներին: Աշխատանքն ավարտելուց հետո 1-ին խումբը կցուցադրի ծիտիկի նկարը, 2-րդ խումբը չար պառավի և 3-րդ խումբը բարի պառավի նկարները: Եվ նրանք հերթով կպատմեն իրենց նկարների բովանդակությունը և այդ ձևով ևս մեկ անգամ կներկայացնեն հեքիաթն ամբողջությամբ:

Նրանց աշխատանքն ամբողջացնել այլ դիդակտիկ նյութերով՝ անտառի, ծիտիկի ընտանիքի, մեծ և փոքր զամբյուղների նկարներով: Վերջում երեխաներին տրամադրել պլաստիլին և առաջարկել ծեփել այն հերոսին, որն ամենից շատն է իրենց դուր եկել:

**Խաղ:** Վերջում երեխաները կխաղան «Շփոթված ծիտիկը» խաղը:

## ՇՓՈԹՎԱԾ ԾԻՏԻԿԸ

Խաղացողները կանգնում են շրջանաձև՝ աղջիկ – տղա հերթականությամբ: Շրջանի կենտրոնում կանգնում է մեկ աղջիկ, ով կատարում է «շփոթված ծիտիկի» դերը, իսկ շրջանից դուրս՝ մեկ տղա, ով կատարում է «արծիվի» դերը: Նա պետք է վազի շրջանի կողքով և փորձի ներս մտնել ու բռնել «շփոթված ծիտիկին»: Իսկ մնացած խաղացողները պաշտպանում են «շփոթված ծիտիկին»: Նրանք ձեռքերով փակում են ճանապարհը, որպեսզի «արծիվը» չկարողանա ներս մտնել:

**Կշռադատում:** Բաց հարցերի միջոցով ամփոփել պարապմունքը:

1. Ի՞նչը ձեզ դուր եկավ այսօրվա մեր կատարած աշխատանքի մեջ:
2. Ի՞նչ նոր բան սովորեցիք այսօր:

**Դիտարկում**

Պարապմունքը անց է կացվել Սևքարի մանկապարտեզի ավագ խմբում: Այն անց է կացվել ԽԻԿ համակարգով: Պարապմունքի իրականացման ընթացքը դիտարկվեց, որից հետո տնօրենն արտահայտեց իր կարծիքը:

1. Դաստիարակը նպատակ էր դրել պարապմունքի ընթացքում զարգացնել սաների մոտ նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունն ու ստեղծագործական ունակությունները:

Նախադպրոցականի համար շատ կարևոր է իրեն վստահելը, հարգելը, ցանկությունները հաշվի առնելը, անաչառ և անկողմնակալ վերաբերմունքը:

Դաստիարակը չէր անտեսում երեխաների կողմից առաջարկվող մտքերն ու ցանկությունները: Երեխաներին հետաքրքրող յուրաքանչյուր հարցի անդրադառնում էր մեծ պատասխանատվությամբ ու կարևորությամբ: Հաշվի էր առնում նրանց անհատական և անձնային որակները:

2. Երեխաներն ազատ էին, անկաշկանդ:
3. Արդի շուկայական հարաբերությունների պայմաններում մենք պետք է ունենանք ազատ, ստեղծագործ ու ինքնուրույն միտք ունեցող սերունդ: Դրան հասնելու համար շատ կարևոր է երեխայի կրթության առաջին աստիճանը՝ նախադպրոցական կրթությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, այս թեման ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում: Սակայն մի բան հստակ է, նպատակաուղղված աշխատանքը տալիս է իր արդյունքները: Դաստիարակը պետք է ճիշտ մոտեցում ցուցաբերի յուրաքանչյուր երեխային, պետք է հաշվի առնի նրանցից յուրաքանչյուրի առանձանահատկությունները, տանի անհատական աշխատանք: Դաստիարակի անչափ կարևոր աշխատանքին օգնության են գալիս ժամանակակից նոր տեխնոլոգիաները, որոնց կիրառությունը ուսուցման պրոցեսը դարձնում է ավելի հետաքրքիր: Այս հետազոտական աշխատանքը հնարավորություն տվեց ուսումնասիրելու գիտական հետաքրքիր նյութեր, որոնք մեզ տվեցին նոր գիտելիքներ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ա. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն»
2. Նախադպրոցական կրթության համալիր ծրագիր (ավագ խումբ)
3. https://www.poqrikishkhan.am Նախադպրոցական տարիք